ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 48-Ն հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի» 8-րդ կետով՝

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մանկավարժական աշխատողի (դասախոսի) մրցույթ՝

1. «Ժողովրդական գործիքներ» բաժնի «Դհոլ»մասնագիտության «Մասնագիտություն» մոդուլի՝ 285 ժամ ծանրաբեռնվածությամբ,

Հաստատության տվյալ թափուր տեղերի մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է՝

1. Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին.

2. 1 դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ կամ (ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս1, կետ 1)

2.2 բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագիտական ուսուցման վկայական և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձը (ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս1, կետ 2),

2.3 հիմնարար է համարվում դասավանդվող մոդուլային ծրագրի բովանդակության առնվազն 30 տոկոսը,

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
10) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,
11) տեղեկանք առողջական վիճակի մասին,

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր,

Վարդանանց 96) 2026 թվականի հունվարի 12-ից հունվարի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 16:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի հունվարի 29-ին, ժամը 12:00-ին, ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 96:

Տեղեկությունների համար դիմել՝ (099)50-25-70, էլեկտրոնային հասցեն՝ vanadzor.state.artcollege@gmail.com :

Տնօրեն՝ Ա.Դարբինյան